



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

ԹԻՎ 1031/Ա

09 հոկտեմբերի 2025թ.

ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Վազգեն Առաջինի փողոցի թիվ 40 շենքի թիվ 43 բնակարանի բնակիչ՝ Արման Գառնիկի Մկրտչյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Խ. Կարճիկյան փողոցի թիվ 3/1 և Խ. Կարճիկյան փողոցի թիվ 3/4 անշարժ գույքերը /հիմք՝անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 10042025-04-0040 տրված՝ 10.04.2025թ. թիվ 17072025-04-0117 տրված՝ 17.07.2025թ., «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Նառա Սամվելի Հովհաննիսյանի կողմից 23.09.2025թ. կնքված թիվ 6024 գրանցամատյանով գրանցված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011GGQ5SYA/ միավորել և տրամադրել մեկ ընդհանուր հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Խ. Կարճիկյան փողոց, թիվ 3/1 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Ս. Աղաբաբյան

Ա. ՄԵՆԱԿՅԱՆ





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐԶԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 10324

02 հոկտեմբեր 2025թ.

ք. Էջմիածին

ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ
ԲԱՑ ԹՈՂՆՎԱԾ ՕԳՈՒՏԸ ՀԱՏՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածնի քաղաքային համայնքի և Զեմֆիրա Հայրիկ Մանուկյանի միջև 17.11.2003թ. /սեղանամատյան թիվ 7008/ կնքվել է Էջմիածնի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող Վաղարշապատ համայնքի, Էջմիածին քաղաքի, «Զվարթնոց» ԳԿՏ տարածքում գտնվող 1հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահողի վարձակալության պայմանագիր:

Զեմֆիրա Հայրիկ Մանուկյանի ժառանգորդ /հիմք՝ «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Նառա Սամվելի Հովհաննիսյանի կողմից 13.05.2025թ. հաստատված թիվ 2373 գրանցամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր/ Աշոտ Կոլյայի Մանուկյանը 22.09.2025թ. դիմել է Վաղարշապատի համայնքապետարան, վերը նշված հողամասի վարձակալության պայմանագիրը լուծելու խնդրանքով:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ, 468-րդ հոդվածների և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 20.12.2024թ.-ի թիվ 102-Ա որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին համայնքի և Զեմֆիրա Հայրիկ Մանուկյանի միջև 17.11.2003թ. /սեղանամատյան թիվ 7008/ կնքված համայնքի սեփականությունը հանդիսացող Վաղարշապատ համայնքի, Էջմիածին քաղաքի, «Զվարթնոց» ԳԿՏ տարածքում գտնվող 1հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահողի վարձակալության պայմանագիրը լուծել ՀՀ օրենքով սահմանված կարգով:
2. Վարձակալությունը վաղաժամկետ դադարեցնելու դիմաց բաց թողնված օգուտի փոխհատուցման համար Աշոտ Կոլյայի Մանուկյանին վճարել 4 500 000 /չորս միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ:
3. Սույն որոշման 2-րդ կետով սահմանված վճարները իրականացնել ներդրումային ծրագրի շրջանակներում «Իմեջին Երևան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից անհրաժեշտ հողամասերի դիմաց վճարումը կատարելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

4. Վարձակալի հետ նոտարական կարգով կնքել հողամասի վարձակալության պայմանագրի լուծման համաձայնագիր և սույն որոշման 2-րդ կետով սահմանված դրամական փոխհատուցումը կատարելու համաձայնագիր /պարտավորագիր/, որից հետո կատարել վարձակալության իրավունքի դադարման պետական գրանցում:

5. Վարձակալության իրավունքի դադարման պետական գրանցման պահին՝ վարձակալության պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետևանքով գոյացած վարձավճարները և տույժ տուգանքները հաշվանցել սույն որոշման 2-րդ կետով նախատեսված վճարներից:

6. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Ս.Կ.



Ա. ՄԵԽԱԿՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 10334

«10» հոկտեմբեր 2025թ.

ք. Էջմիածին

**«ԻՄԻՋ Մ. Գ.» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆՆ ԱՅԼ
ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի N 33-Ն և 2024 թվականի դեկտեմբերի 25-ի N 110-Ն որոշումները և «ԻՄԻՋ Մ. Գ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի հայտը (մուտք՝ 2025 թվականի հոկտեմբերի 01-ի N 6685)։

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «ԻՄԻՋ Մ. Գ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տալ 2025 թվականի հոկտեմբերի 01-ից մինչև հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում Վաղարշապատ համայնքի Երևան-Արմավիր-Թուրքիայի հանրապետություն Մ5, 15.150 կմ (Մանուշյան փողոց) հասցեում այլ արտաքին գովազդի տեղադրման թույլտվություն (Թույլտվություն N 324 կցվում է)։

2. Ընդունել ի գիտություն, որ այլ արտաքին գովազդի տեղադրման թույլտվության համար սահմանված տեղական տուրքը վճարված է։

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Ս. Աղաբաբյան

Ա. ՄԵՆԱԿՅԱՆ





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 10344

03 հոկտեմբերի 2025թ.

ք.Էջմիածին

**ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷԶՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ
5/51 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԻ ՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՃՇՏՄԱՆ ՄԱՍԻՆ**

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մ.Մեխակյան փողոցի թիվ 76 տան բնակիչ Համբարձում Ռազմիկի Խանազադյանի դիմումը՝ պարզվեց, որ իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 26.12.2011թ. տրված թիվ 2883045 սեփականության վկայական/, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջինի փողոցի թիվ 5/51 հասցեում գտնվող խանութի զբաղեցրած հողամասի մակերեսը կազմում է 0.0078հա:

Համաձայն «Կարեն Մաչանյան» ԱԶ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 15.09.2025թ. կազմված հատակագծի խանութի արտաքին չափերը չեն փոփոխվել, սակայն հողամասի մակերեսը փաստացի կազմում է 0.00833հա, ինչից պարզ է դառնում որ հողամասի սահմանները կադաստրային քարտեզում և սեփականության իրավունքի վկայականում հողամասի մակերեսը սխալ է արտացոլված:

Հաշվի առնելով վերոնշյալը և այն փաստը, որ հողամասը չի ընդգրկվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և չեն առաջացնում սերվիտուտ, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, ՀՀ կառավարության 29.04.2021թ. «Կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգը հաստատելու մասին» թիվ 698-Ն որոշմամբ հաստատված հավելված 2-ի 42-րդ կետի և ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի և պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջինի փողոցի թիվ 5/51 հասցեում գտնվող փաստացի զբաղեցրած 0.00833հա մակերեսով հողամասի սահմանները՝ համաձայն ներկայացված հատակագծի:
2. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջինի փողոցի թիվ 5/51 հասցեում գտնվող փաստացի զբաղեցրած 0.00833հա մակերեսով հողամասից՝ 0.00576հա մակերեսով մասի գործառնական նշանակությունը այլ հողամասից փոփոխել բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Ս.Ա.Ա.

Ա.ՄԵԽԱԿՅԱՆ





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 10354

03 հոկտեմբեր 2025թ.

Բ.Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 02.09.2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 3541 ՏԵՂԵԿԱՆՔԸ,
12.09.2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 937Ա ՈՐՈՇՈՒՄԸ, 17.09.2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 960Ա
ՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ «ԿԱՐԵՆ ՄԱՀԱՆՅԱՆ» ԱԶ-Ի /ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ ԹԻՎ 0244/
ԿՈՂՄԻՑ 01.09.2025 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱԶՄՎԱԾ 02.09.2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության
օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական
վարույթի մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ
օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ուժը կորցրած ճանաչել Վաղարշապատ համայնքի ղեկավարի 02.09.2025թ. թիվ 3541
տեղեկանքը, 12.09.2025թ. թիվ 937Ա որոշումը, 17.09.2025թ. թիվ 960Ա որոշումը և «Կարեն
Մաչանյան» ԱԶ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 01.09.2025թ. կազմված
02.09.2025թ. հաստատված հատակագիծը:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Ս.Ա.Էջմիածին

Ա. ՄԵՆԱԿՅԱՆ





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 103/25

03 հոկտեմբեր 2025թ.

ք. Էջմիածին

ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ 103/25 վարչական գործը՝ հարկային պարտավորությունների ժամանակին չվճարված գումարները գանձելու մասին, պարզեց որ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» հիմնադրամը /հասցե՝ ք. Երևան, Կենտրոն, Տերյան փող., թիվ 74 տուն, պետ.ռեգիստրի գրանցման համար 222.160.699243/ 2012-09-07, ՀՎՀՀ 01507028/ հանդիսանալով անշարժ գույքի հարկ վճարող սուբյեկտ, ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել հարկեր վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ ՀՀ-ում գործաձվող անշարժ գույքի հարկի հարկի հաշվառման համակարգից /VXSOFТ ծրագիր/ ստացված տեղեկանքների և Վաղարշապատի համայնքապետարանի 04.09.2025 թվականի թիվ 3603 գրության հիման վրա, 2025 թվականի սեպտեմբերի 4-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով հարուցվել է վարչական վարույթ:

Համաձայն գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող շենքերի և շինությունների հաշվառման ու գնահատման տվյալների վերաբերյալ ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության հարկային (տարածքային) տեսչության ՀՀ ԿԱ ԱԳԿԴ-ի աշխատակազմի ամփոփ ցուցակից և ՀՀ ԿԱ ԱԳԿԴ կոմիտեի աշխատակազմի հողամասերի հաշվառման ու գնահատման տվյալների ամփոփ ցուցակից քաղվածքների՝ Վաղարշապատ համայնքի տարածքում գտնվող անշարժ գույքերը հանդիսանում են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» հիմնադրամի սեփականություն /կամ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված/ և ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով վերջինս չի կատարել անշարժ գույքի հարկ վճարելու պարտականությունները, որի հետևանքով առաջացել է՝

1) Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Իսի-Լե-Մուլինյոյի փող., թիվ 1 հասցեում գտնվող անշարժ գույքի /հողամասի կադաստրային ծածկագիր՝ 04-002-0602-0008 և շինության կադաստրային ծածկագիր՝ 04-002-0602-0008-002/ հարկի գծով 111 624 /**հարյուր տասնմեկ հազար վեց հարյուր քսանչորս**/ ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 91 612 /իննսունմեկ հազար վեց հարյուր տասներկու/ ՀՀ դրամ 2021թ.-ի, 2022թ.-ի, 2023թ.-ի 1-ին և 2-րդ կիսամյակների, 2024թ.-ի 1-ին և 2-րդ կիսամյակների և 2025թ.-ի 1-ին կիսամյակի համար ապառքի գումար և 20 012 /քսան հազար տասներկու/ ՀՀ դրամ 2021-2025թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

2) Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի /2.6866 հա մակերեսով, հողամասի կադաստրային ծածկագիր՝ 04-081-0186-0001/ հարկի գծով 279 120 /**երկու հարյուր յոթանասունինը հազար հարյուր քսան**/ ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 220 880 /երկու հարյուր քսան հազար ութ հարյուր ութսուն/ ՀՀ դրամ 2021թ.-ի, 2022թ.-ի, 2023թ.-ի 1-ին և 2-րդ կիսամյակների, 2024թ.-ի 1-ին և 2-րդ կիսամյակների և 2025թ.-ի 1-ին կիսամյակի համար ապառքի գումար և 58 240 /հիսունուր հազար երկու հարյուր քառասուն/ ՀՀ դրամ 2021-2025թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

3) Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող անշարժ

381 431 /երեք միլիոն երեք հարյուր ութսունմեկ հազար չորս հարյուր երեսունմեկ/ ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 2 675 877 /երկու միլիոն վեց հարյուր յոթանասունհինգ հազար ութ հարյուր յոթանասունյոթ/ ՀՀ դրամ 2021թ.-ի, 2022թ.-ի, 2023թ.-ի 1-ին և 2-րդ կիսամյակների, 2024թ.-ի 1-ին և 2-րդ կիսամյակների և 2025թ.-ի 1-ին կիսամյակի համար ապառքի գումար և 705 554 /յոթ հարյուր հինգ հազար հինգ հարյուր հիսունչորս/ ՀՀ դրամ 2021-2025թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

4) Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի /16.5984 հա մակերեսով, հողամասի կադաստրային ծածկագիր՝ 04-081-0182-0001/ հարկի գծով **1 724 456 /մեկ միլիոն յոթ հարյուր քսանչորս հազար չորս հարյուր հիսունվեց/** ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 1 364 639 /մեկ միլիոն երեք հարյուր վաթսունչորս հազար վեց հարյուր երեսունինը/ ՀՀ դրամ 2021թ.-ի, 2022թ.-ի, 2023թ.-ի 1-ին և 2-րդ կիսամյակների, 2024թ.-ի 1-ին և 2-րդ կիսամյակների և 2025թ.-ի 1-ին կիսամյակի համար ապառքի գումար և 359 817 /երեք հարյուր հիսունինը հազար ութ հարյուր տասնյոթ/ ՀՀ դրամ 2021-2025թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

5) Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի /8.5165 հա մակերեսով, հողամասի կադաստրային ծածկագիր՝ 04-081-0186-0002/ հարկի գծով **884 803 /ութ հարյուր ութսունչորս հազար ութ հարյուր երեք/** ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 700 184 /յոթ հարյուր հազար հարյուր ութսունչորս/ ՀՀ դրամ 2021թ.-ի, 2022թ.-ի, 2023թ.-ի 1-ին և 2-րդ կիսամյակների, 2024թ.-ի 1-ին և 2-րդ կիսամյակների և 2025թ.-ի 1-ին կիսամյակի համար ապառքի գումար և 184 619 /հարյուր ութսունչորս հազար վեց հարյուր տասնինը/ ՀՀ դրամ 2021-2025թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

6) Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի /4.0399 հա մակերեսով, հողամասի կադաստրային ծածկագիր՝ 04-081-0187-00021/ հարկի գծով **419 718 /չորս հարյուր տասնինը հազար յոթ հարյուր տասնութե/** ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 332 142 /երեք հարյուր երեսուներկու հազար հարյուր քառասուներկու/ ՀՀ դրամ 2021թ.-ի, 2022թ.-ի, 2023թ.-ի 1-ին և 2-րդ կիսամյակների, 2024թ.-ի 1-ին և 2-րդ կիսամյակների և 2025թ.-ի 1-ին կիսամյակի համար ապառքի գումար և 87 576 /ութսունյոթ հազար հինգ հարյուր յոթանասունվեց/ ՀՀ դրամ 2021-2025թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

7) Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի /8.712 հա մակերեսով, հողամասի կադաստրային ծածկագիր՝ 04-081-0183-0005/ հարկի գծով **1 221 684 /մեկ միլիոն երկու հարյուր քսանմեկ հազար վեց հարյուր ութսունչորս/** ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 966 772 /ինը հարյուր վաթսունվեց հազար յոթ հարյուր յոթանասուներկու/ ՀՀ դրամ 2021թ.-ի, 2022թ.-ի, 2023թ.-ի 1-ին և 2-րդ կիսամյակների, 2024թ.-ի 1-ին և 2-րդ կիսամյակների և 2025թ.-ի 1-ին կիսամյակի համար ապառքի գումար և 254 912 /երկու հարյուր հիսունչորս հազար ինը հարյուր տասներկու/ ՀՀ դրամ 2021-2025թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

8) Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի /3.8195 հա մակերեսով, հողամասի կադաստրային ծածկագիր՝ 04-081-0066-0012 և շինության կադաստրային ծածկագիր՝ 04-081-0066-0012-004/ հարկի գծով **2 426 202 /երկու միլիոն չորս հարյուր քսանվեց հազար երկու հարյուր երկու/** ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 2 000 409 /երկու միլիոն չորս հարյուր ինը/ ՀՀ դրամ 2023թ.-ի 1-ին և 2-րդ կիսամյակների, 2024թ.-ի 1-ին և 2-րդ կիսամյակների և 2025թ.-ի 1-ին կիսամյակի համար ապառքի գումար և 425 793 /չորս հարյուր քսանհինգ հազար յոթ հարյուր իննսուներեք/ ՀՀ դրամ 2023-2025թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

9) Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի /1.763 հա մակերեսով, հողամասի կադաստրային ծածկագիր՝ 04-081-0100-0021 և շինության կադաստրային ծածկագիր՝ 04-081-0100-0021-001/ հարկի գծով **460 004 /չորս հարյուր վաթսուն հազար չորս/** ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 379 342 /երեք հարյուր յոթանասունինը հազար երեք հարյուր քառասուներկու/ ՀՀ դրամ 2023թ.-ի 1-ին և 2-րդ կիսամյակների, 2024թ.-ի 1-ին և

2-րդ կիսամյակների և 2025թ.-ի 1-ին կիսամյակի համար ապառքի գումար և 80 662 /ութսուն հազար վեց հարյուր վաթսուներկու/ ՀՀ դրամ 2023-2025թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

10) Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի /0.29 հա մակերեսով, հողամասի կադաստրային ծածկագիր՝ 04-081-0066-0008 և շինության կադաստրային ծածկագիր՝ 04-081-0066-0008-003/ հարկի գծով **76 166 /յոթանասունվեց հազար հարյուր վաթսուներկու/** ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 62 809 /վաթսուներկու հազար ութ հարյուր ինը/ ՀՀ դրամ 2023թ.-ի 1-ին և 2-րդ կիսամյակների, 2024թ.-ի 1-ին և 2-րդ կիսամյակների և 2025թ.-ի 1-ին կիսամյակի համար ապառքի գումար և 13 357 /տասներեք հազար երեք հարյուր հիսունյոթ/ ՀՀ դրամ 2023-2025թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

11) Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի /0.399 հա մակերեսով, հողամասի կադաստրային ծածկագիր՝ 04-081-0048-0010 և շինության կադաստրային ծածկագիր՝ 04-081-0048-0010-001/ հարկի գծով **78 154 /յոթանասունութ հազար հարյուր հիսունչորս/** ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 64 457 /վաթսունչորս հազար չորս հարյուր հիսունյոթ/ ՀՀ դրամ 2023թ.-ի 1-ին և 2-րդ կիսամյակների, 2024թ.-ի 1-ին և 2-րդ կիսամյակների և 2025թ.-ի 1-ին կիսամյակի համար ապառքի գումար և 13 697 /տասներեք հազար վեց հարյուր իննսունյոթ/ ՀՀ դրամ 2023-2025թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

Վաղարշապատի համայնքապետարանը 12.09.2025 թվականին ստացվել է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» հիմնադրամի ներկայացուցչի գրությունը, որով վերջինս խնդրել է կարճել «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» հիմնադրամի դեմ հարուցված վարչական վարույթը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հիմնադրամը ամբողջովին ազատված է հարկերից, հիմք ընդունելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքում «Փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2010 թվականի մայիսի 18-ի թիվ ՀՕ-51-Ն օրենքի 1-ին հոդվածը:

Համայնքապետարանի կողմից ուսումնասիրվել է ներկայացված դիմումը և Վաղարշապատ համայնքի ղեկավարի պարշտոնակատարի 16.09.2025 թվականի թիվ 3772 գրությամբ ներկայացվել է պատասխան, որով հայտնվել է, որ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» հիմնադրամը ազատված չէ տեղական հարկերը վճարելու պարտականությունից, սակայն ՀՀ կառավարության 20 հուլիսի 2017 թվականի N 872-Ն որոշմամբ սահմանված ցանկի 6-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատի ուսումնափորձարարական տնտեսությունը («Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ) ընդգրկվում է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կազմակերպությունների ցանկում և կարող է ազատվել Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի հարկից 50 տոկոսի չափով:

Հիմք ընդունելով վերոնշյալը և այն հանգամանքը, որ անհրաժեշտ է պարզել 04.09.2025 թվականին հարուցված թիվ 103/25 վարչական վարույթում ներառված հողամասերը արդյոք հանդիսանում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված բացառապես գիտական և ուսումնական, ինչպես նաև գյուղատնտեսական, անտառաբուծական մշակաբույսերի սորտափորձարկման նպատակներով օգտագործվող հողեր, անհրաժեշտություն է առաջացել հարցմամբ դիմել համապատասխան կառույցներին:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանքը, որ վարչական վարույթի համար սահմանված ժապետը համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի՝ 30 օր է, սակայն սահմանված ժամկետում վարչական մարմինը չի հասցնի կատարել պահանջվող հարցումները, ղեկավարվելով նույն օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի դրույթներով գտնում եմ, որ անհրաժեշտ է վարչական վարույթի ժամկետը երկարաձգել:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի՝

«1. Վարչական վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է: Օրենքով կարող են սահմանվել հատուկ՝ 30 օրից կարճ կամ ավելի երկար ժամկետներ:

2. Վարչական վարույթի ժամկետն սկսվում է դիմումը տվյալ վարչական մարմնում մուտքագրելու օրվանից, իսկ վարչական մարմնի նախաձեռնությամբ ընդունվելիք վարչական ակտերի համար՝ նախաձեռնության օրվանից:

3. Սույն օրենքով նախատեսված ժամկետները հաշվարկվում են օրացուցային օրերով:

Եթե ժամկետը լրանում է ոչ աշխատանքային օրը, ապա ժամկետն ավարտված է համարվում այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվա ժամը 18-00-ին»:

Համաձայն նույն օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի գ) կետի՝ «...վարչական վարույթի ժամկետը կարող է երկարաձգվել, եթե՝ փոխօգնության կարգով միջոցներ ձեռնարկելու համար անհրաժեշտ է ավելի երկար ժամանակ, քան վարչական վարույթի համար օրենքով սահմանված ժամկետի ավարտը»:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «... սույն հոդվածի 1-ին մասի «գ» և «դ» կետերով նախատեսված դեպքերում վարչական վարույթի ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 30 օր ժամկետով»:

Հիմքը ընդունելով այն հանգամանքը, որ վարչական մարմինը պարտավոր է ապահովել վարչական վարույթի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները, հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 46-րդ, 47-րդ, 53-րդ և 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Երկարաձգել 04.09.2025 թվականին հարուցված թիվ 103/25 վարչական վարույթի ժամկետը 30 օր ժամկետով:

2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:


3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am-ի կամ համայնքապետարանի տեղեկագրում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Ս. Աղաբաբյան

Ա. ՄԵԽԱԿՅԱՆ





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 12346X

03 հոկտեմբեր 2025թ.

ք. Էջմիածին

ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԶՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ղեկավարի պաշտոնակատարը, քննության առնելով թիվ 102/25 վարչական գործը՝ հարկային պարտավորությունների ժամանակին չվճարված գումարները գանձելու մասին, պարզեց որ, «ԱԼԿԱՄԱՐ» ՍՊԸ-ն /հասցե՝ ք. Երևան, Արաբկիր, Ա.Խաչատրյան փող., թիվ 12 շենք, թիվ 18 բն., պետ.ռեգիստրի գրանցման համար 264.110.06826/2004-06-10, ՀՎՀՀ 00085504/ հանդիսանալով անշարժ գույքի հարկ վճարող սուբյեկտ, «Գույքահարկի մասին» և «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքներով, ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել հարկեր վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ ՀՀ-ում գործածվող գույքահարկի և հողի հարկի հարկով հարկվող օբյեկտների միասնական համակարգից /vector+ ծրագիր/ և անշարժ գույքի հարկի հաշվառման համակարգից /VXSOFТ ծրագիր/ ստացված տեղեկանքների և Վաղարշապատի համայնքապետարանի 04.09.2025 թվականի թիվ 3602 գրության հիման վրա, 2025 թվականի սեպտեմբերի 4-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով հարուցվել է վարչական վարույթ:

«ԱԼԿԱՄԱՐ» ՍՊԸ-ին ուղարկվել է ծանուցում /հիմք 04.09.2025թ. թիվ 3602/ վարչական վարույթի հարուցման մասին: Վերջիններիս առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո 7-օրյա ժամկետում ներկայացնել դիմում (պնդում) վարչական գործով լուծման անցկացնելու վերաբերյալ և կատարել համայնքի հանդեպ առաջացած հարկային պարտավորությունները:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի երկրորդ մասի «ա» ենթակետով, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «ԱԼԿԱՄԱՐ» ՍՊԸ-ին ծանուցումը և իրազեկումը ուղարկվելուց հետո, առաջարկ չի ներկայացվել լուծ անցկացնելու անհրաժեշտության մասին, վարչական վարույթի լուծ չի անցկացվել:

Վարչարարության կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Համաձայն գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող շենքերի և շինությունների հաշվառման ու գնահատման տվյալների վերաբերյալ ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության հարկային



**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 10340X

03 հոկտեմբեր 2025թ.

ք. Էջմիածին

**ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԶՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ
ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Վաղարշապատ համայնքի ղեկավարի պաշտոնակատարը, քննության առնելով թիվ 102/25 վարչական գործը՝ հարկային պարտավորությունների ժամանակին չվճարված գումարները գանձելու մասին, պարզեց որ, «ԱԼԿԱՄԱՐ» ՍՊԸ-ն /հասցե՝ ք. Երևան, Արաբկիր, Ա.Խաչատրյան փող., թիվ 12 շենք, թիվ 18 բն., պետ.ռեգիստրի գրանցման համար 264.110.06826/2004-06-10, ՀՎՀՀ 00085504/ հանդիսանալով անշարժ գույքի հարկ վճարող սուբյեկտ, «Գույքահարկի մասին» և «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքներով, ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել հարկեր վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ ՀՀ-ում գործածվող գույքահարկի և հողի հարկի հարկով հարկվող օբյեկտների միասնական համակարգից /vector+ ծրագիր/ և անշարժ գույքի հարկի հաշվառման համակարգից /VXSOFТ ծրագիր/ ստացված տեղեկանքների և Վաղարշապատի համայնքապետարանի 04.09.2025 թվականի թիվ 3602 գրության հիման վրա, 2025 թվականի սեպտեմբերի 4-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով հարուցվել է վարչական վարույթ:

«ԱԼԿԱՄԱՐ» ՍՊԸ-ին ուղարկվել է ծանուցում /հիմք 04.09.2025թ. թիվ 3602/ վարչական վարույթի հարուցման մասին: Վերջիններիս առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո 7-օրյա ժամկետում ներկայացնել դիմում (պնդում) վարչական գործով լուծման անցկացնելու վերաբերյալ և կատարել համայնքի հանդեպ առաջացած հարկային պարտավորությունները:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի երկրորդ մասի «ա» ենթակետով, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «ԱԼԿԱՄԱՐ» ՍՊԸ-ին ծանուցումը և իրազեկումը ուղարկվելուց հետո, առաջարկ չի ներկայացվել լուծ անցկացնելու անհրաժեշտության մասին, վարչական վարույթի լուծ չի անցկացվել:

Վարչարարության կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Համաձայն գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող շենքերի և շինությունների հաշվառման ու գնահատման տվյալների վերաբերյալ ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության հարկային

(տարածքային) տեսչության ՀՀ ԿԱ ԱԳԿՊ-ի աշխատակազմի ամփոփ ցուցակից և ՀՀ ԿԱ ԱԳԿՊ կոմիտեի աշխատակազմի հողամասերի հաշվառման ու գնահատման տվյալների ամփոփ ցուցակից քաղվածքների՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Երևանյան խճուղի 14 հասցեում գտնվող անշարժ գույքերը հանդիսանում են «ԱԼԿԱՄԱՐ» ՍՊԸ-ի սեփականությունը և «Գույքահարկի մասին» և «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքներով, ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով վերջինս չի կատարել գույքահարկ, հողի հարկ և անշարժ գույքի հարկ վճարելու պարտականությունները, որի հետևանքով առաջացել է՝

1) Վերը նշված հասցեում գտնվող անշարժ գույքի գույքահարկի գծով **2 778 866 /երկու միլիոն յոթ հարյուր յոթանասունութ հազար ութ հարյուր վաթսունվեց/** ՀՀ դրամ՝ մինչև 01.01.2021թ.-ը ընկած ժամանակահատվածի հարկային պարտավորություն, որից 338 288 /երեք հարյուր երեսունութ հազար երկու հարյուր ութսունութ/ ՀՀ դրամ ապառքի գումար և 2 440 578 /երկու միլիոն չորս հարյուր քառասուն հազար հինգ հարյուր յոթանասունութ/ ՀՀ դրամ ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

2) Վերը նշված հասցեում գտնվող հողատարածքի համար հողի հարկի գծով **5 822 944 /հինգ միլիոն ութ հարյուր քսաներկու հազար ինը հարյուր քառասունչորս/** ՀՀ դրամ՝ մինչև 01.01.2021թ.-ը ընկած ժամանակահատվածի հարկային պարտավորություն, որից 922 860 /ինը հարյուր քսաներկու հազար ութ հարյուր վաթսուն/ ՀՀ դրամ ապառքի գումար և 4 900 084 /չորս միլիոն ինը հարյուր ութսունչորս/ ՀՀ դրամ ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

3) Վերը նշված հասցեում գտնվող անշարժ գույքի /10,80082 հա մակերեսով, հողամասի կադաստրային ծածկագիր՝ 04-002-0484-0007 և շինության կադաստրային ծածկագիր՝ 04-002-0484-0007-017 / հարկի գծով **8 274 607 /ութ միլիոն երկու հարյուր յոթանասունչորս հազար վեց հարյուր յոթ/** ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 6 913 893 /վեց միլիոն ինը հարյուր տասներեք հազար ութ հարյուր իննսուներեք/ ՀՀ դրամ 2023թ.-ի 1-ին և 2-րդ կիսամյակների համար, 2024թ.-ի 1-ին և 2-րդ կիսամյակների համար և 2025թ.-ի 1-ին կիսամյակի համար ապառքի գումար և 1 360 714 /մեկ միլիոն երեք հարյուր վաթսուն հազար յոթ հարյուր տասնչորս/ ՀՀ դրամ 2023-2025թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

4) Վերը նշված հասցեում գտնվող անշարժ գույքի /10,895 հա մակերեսով, հողամասի կադաստրային ծածկագիր՝ 04-002-0484-0007 և շինության կադաստրային ծածկագիր՝ 04-002-0484-0007-009/ հարկի գծով **3 986 074 /երեք միլիոն ինը հարյուր ութսունվեց հազար յոթանասունչորս/** ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 3 063 413 /երեք միլիոն վաթսուներեք հազար չորս հարյուր տասներեք/ ՀՀ դրամ 2021-2023թթ. ապառքի գումար և 922 661 /ինը հարյուր քսաներկու հազար վեց հարյուր վաթսունմեկ/ ՀՀ դրամ 2021-2023թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

ՀՀ հարկային օրենսգրքի /այսուհետ Օրենսգիրք/ 6-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են՝ տեղական հարկեր, որոնց տեսակներն են՝ անշարժ գույքի հարկը և փոխադրամիջոցների գույքահարկը:

Օրենսգրքի 224-րդ հոդվածի համաձայն՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար ՀՀ հարկային օրենսգրքի 45-րդ գլխով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Օրենսգրքի 225-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք...

Օրենսգրքի 227-րդ հոդվածի համաձայն՝ անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ է համարվում անշարժ գույքը՝ հողամասերը և (կամ) դրանց բարելավումները (հողամասերում կառուցված ստորգետնյա և վերգետնյա շենքերը, շինությունները կամ կառույցները)...

Օրենսգրքի 226-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմիններ իրականացնում են հարկ վճարողների և անշարժ գույքի հարկի հաշվառումը՝ Կառավարության սահմանած կարգով անշարժ գույքի հարկի վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքումը), վճարման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հարկային վարչարարությունը:

Օրենսգրքի 236-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ կազմակերպությունները և ֆիզիկական անձինք անշարժ գույքի հարկի տարեկան գումարները անշարժ գույքի գտնվելու վայրի համայնքի բյուջե են վճարում մինչև հարկային տարվա դեկտեմբերի 1-ը:

Օրենսգրքի 397-րդ հոդվածի համաձայն՝ հարկային իրավախախտում է համարվում հարկ վճարողի կամ հարկային գործակալի հակաիրավական այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար Օրենսգրքով և (կամ) վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված է հարկային պատասխանատվություն:

Հարկային պատասխանատվությունը իրավական պատասխանատվության ինքնուրույն տեսակ է, որն ուղղված է պետության ֆինանսական կայունության և ֆինանսական շահերի ապահովմանը՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթները խախտելու հետևանքով պետությանը պատճառված նյութական վնասի լրիվ ծավալով հատուցման, հարկային իրավախախտում կատարած հարկ վճարողի նկատմամբ լրացուցիչ պարտավորություն սահմանելու, ինչպես նաև նրան հարկային պարտավորության անհապաղ կատարումը պարտադրելու և հետագա հարկային իրավախախտումները կանխարգելելու միջոցով:

Համաձայն «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ գույքահարկը սեփականության իրավունքով նույն օրենքի 3-րդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար վերը նշված օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Նույն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ գույքահարկ վճարողներ են համարվում նաև Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձինք, որոնց Հայաստանի Հանրապետության տարածքում պատկանում է օրենքի 4-րդ հոդվածով սահմանված հարկվող օբյեկտ համարվող գույք:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ սույն օրենքի իմաստով գույքահարկով հարկվող օբյեկտ են համարվում շենքերը, շինությունները, փոխադրամիջոցները:

Համաձայն «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 13 հոդվածի 1-ին կետի՝ կազմակերպությունները գույքահարկի հաշվարկված գումարները սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով համապատասխան բյուջե են վճարում յուրաքանչյուր եռամսյակ՝ մինչև տվյալ եռամսյակին հաջորդող երկրորդ ամսվա 1-ը ներառյալ:

Նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և համամասնությամբ գույքահարկի գումարը վճարվում է՝ համայնքի վարչական տարածքում գտնվող շինությունների համար՝ հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե, իսկ համայնքների վարչական տարածքներից դուրս գտնվող շինությունների համար՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

Նույն մասի 2-րդ կետի համաձայն՝ հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցի համար՝ գույքահարկ վճարող կազմակերպության գտնվելու (հաշվառման) վայրի համայնքի բյուջե: Փոխադրամիջոցի սեփականատեր համարվող ֆիզիկական անձը գույքահարկը վճարում է իր հաշվառման (գրանցման) վայրի համայնքի բյուջե: Նշված հաշվառման (գրանցման) բացակայության դեպքում գույքահարկի գումարը վճարում է իր հիմնական բնակության վայրի համայնքի բյուջե: Եթե ֆիզիկական անձի հիմնական բնակության վայրը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս է, ապա գույքահարկի գումարը վճարվում է փոխադրամիջոցի հիմնական գտնվելու վայրի համայնքի բյուջե:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն նույն օրենքը խախտելու համար գույքահարկ վճարողները պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Համաձայն «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները:

Համաձայն «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ գյուղատնտեսական նշանակության հողերի համար հարկման օբյեկտ է հանդիսանում հողի կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային զուտ եկամուտը:

Ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի համար հարկման օբյեկտ է հանդիսանում հողի կադաստրային գնահատման արժեքը:

Համաձայն «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի՝ հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը:

Տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ կետով, ՀՀ հարկային օրենսգրքի 3-րդ, 4-րդ, 224-րդ-227-րդ, 236-րդ, 397-րդ, 400-րդ և 401-րդ հոդվածներով և 447-րդ հոդվածի 1.1-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով, «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 2-4-րդ, 13-րդ և 17-րդ հոդվածներով, «Հողի հարկի

մասին» ՀՀ օրենքի 1-2-րդ և 16-րդ հոդվածներով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետով, 34-րդ, 53-րդ, 58-60-րդ և 89-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. «ԱԼԿԱՄԱՐ» ՍՊԸ-ից հոգուտ Վաղարշապատ համայնքի բյուջեի գանձել ընդհանուր **20 862 491 /քսան միլիոն ութ հարյուր վաթսուներկու հազար չորս հարյուր իննսունմեկ/ ՀՀ դրամ** չվճարված հարկային պարտավորությունների գումար:

2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով, այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am-ի կամ համայնքապետարանի տեղեկագրում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Վ.Լ.

Ա. ՄԵՆԱԿՅԱՆ





**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1038-Լ

«03» հոկտեմբերի 2025թ.

ք. Էջմիածին

**ԷԶՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ 2710 ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՄԱՔԱՂԱՔԱՅԻՆ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ
ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 39-րդ հոդվածի պահանջներով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի խորհրդական Նարեկ Խաչատրյանի զեկուցագիրը, հոկտեմբերի 8-ին՝ Էջմիածին քաղաքի 2710 ամյակի կապակցությամբ համաքաղաքային միջոցառումը կազմակերպելու համար անհրաժեշտ ապրանքներ ձեռք բերելու նպատակով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վաղարշապատ համայնքի 2025թ. բյուջեով նախատեսված համաքաղաքային միջոցառումների միջոցներից 440170 /չորս հարյուր քառասուն հազար մեկ հարյուր յոթանասուն/ դրամ փոխանցել ԱԶ Հմայակ Ստեփանյանին՝ նրա հետ կնքված պայմանագրով ֆինանսական պարտավորությունները կատարելու նպատակով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Ա. ՄԵԽԱԿՅԱՆ





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Թ Ի Վ 1039-Լ

«03» հոկտեմբերի 2025թ.

ք. Էջմիածին

ԷԶՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ 2710 ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՄԱՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 39-րդ հոդվածի պահանջներով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի խորհրդական Նարեկ Խաչատրյանի զեկուցագիրը, հոկտեմբերի 8-ին՝ Էջմիածին քաղաքի 2710 ամյակի կապակցությամբ համաքաղաքային միջոցառման հանդիսավոր շքերթի մասնակիցների համար դրոշներ ձեռք բերելու նպատակով.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

- Վաղարշապատ համայնքի 2025թ. բյուջեով նախատեսված համաքաղաքային միջոցառումների միջոցներից 330000 /երեք հարյուր երեսուն հազար/ դրամ փոխանցել ԱԶ Վանուշ Կարապետյանին՝ նրա հետ կնքված պայմանագրով ֆինանսական պարտավորությունները կատարելու նպատակով:
- Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Ա. ՄԵՆԱԿՅԱՆ

